3. Մեկնաբանելու քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերը:

##### **գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
2. աշխատելու թիմում:

#### **10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ2. Ուսումնական կամ աշխատանքային միջավայրում աշխատելու որպես թիմի անդամ, ստանձնելու պատասխանատվություն համընդինուր նպատակին հասնելու համար, կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, արդարացնելու, հետևողություններ անելու, առաջարկելու լուծումներ, ինչպես նաև հիմնավորելու և պաշտպանելու սեփական տեսակետը:**

**Գ4. Պահպանելու մասնագիտական էթիկայի չափանիշները և տեխնոլոգիական լուծումների նախազօնան և մասնագիտական գործունեության ժամանակ սեփական վարքագոնվ նպաստելու համամարդկային արժեքների տարածմանը:**

#### **11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. զեկուցումներ:

#### **12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**Ստուգարք.** Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բոլոր աշխատանքները, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

### 13. Քաղաքացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից:

- Թեմա 1.** Քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը: **Թեմա 2.** Քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները: **Թեմա 3.** Քաղաքական իշխանություն և իշխանական հարաբերությունները: **Թեմա 4.** Քաղաքական ընտրանի /Էլիտա/: **Թեմա 5.** Քաղաքական լիդերություն: **Թեմա 6.** Քաղաքական ռեժիմները: **Թեմա 7.** Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Պետության ծագումը, բնույթը, դերը և հիմնական ֆունկցիաները: **Թեմա 8.** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգերը: **Թեմա 9.** Քաղաքացիական հասարակություն: **Թեմա 10.** Քաղաքական սոցիալականացում և քաղաքական մասնակցություն: **Թեմա 11.** Ընտրություններ և ընտրական համակարգերը: **Թեմա 12.** Գաղափարախոսությունների տեսություն: **Թեմա 13.** Ազգեր և ազգային քաղաքականություն: **Թեմա 14.** Քաղաքականությունը և կրոնը: **Թեմա 15.** Քաղաքական մշակույթ:

### 14. Հիմնական գրականության ցանկ.

1. Քաղաքագիտություն, Եր., 2006:
2. Буренко В., Журавлев В., Политология. Изд-во Моск. гуманит. ун-та, М., 2004.
3. Гаджиев К., Политология. М., 2005.
4. Политология. Под ред. А.А. Радугина. М., 1999.
5. Пушкарева Г.В., Политология., М., 2002.
6. Мальцев В.А., Основы политологии, М., 1998.

1.0202/B17	2. Մշակութաբանության հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5. 30/0/0	
6.3-րդ կիսամյակ	7. Ստուգարք	
<b>8. Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային ու հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:</b>		
<b>Դասընթացի խնդիրները.</b>		
1. Ձեսավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների վերաբերյալ:		
2. Ուսումնասիրել հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերը:		
<b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք՝</b>		
<b>ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն</b>		
1. Ներկայացնելու գիտության մեջ մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները:		
2. սահմանելու մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:		
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>		
1. մեկնաբանելու մշակույթ, ենթամշակույթ, հակամշակույթ հասկացությունները:		
2. վերլուծելու մշակութային գործընթացները և մշակույթի զարգացման դինամիկան:		
3. մեկնաբանելու ժամանակակից մշակութային գործընթացների առանձնահատկությունները:		
<b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b>		
1. աշխատելու թիմում:		
2. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
<b>10. Դասընթացը ձևակորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>		
<b>Գ2. Ուսումնական կամ աշխատանքային միջավայրում աշխատելու որպես թիմի անդամ, ստանձնելու պատասխանատվություն համընդհանուր նպատակին հասնելու համար, կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, կազմակերպելու մտագրուներ և քննարկումներ, բանավիճելու, արդարացնելու, հետևություններ անելու, առաջարկելու լուծումներ, ինչպես նաև հիմնավորելու և պաշտպանելու սեփական տևակետը:</b>		
<b>Գ4. Պահպանելու մասնագիտական էթիկայի չափանիշները, մասնագիտական գործունեության ընթացքում սեփական վարքագծով նպաստելու համամարդկային արժեքների ձևավորմանը և տարածմանը:</b>		
<b>11. Վիճակում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b>		
1. դասախոսություն		
2. քննարկումներ		

3. բանավեճեր 4. ուժեղատներ 5. գեկուցումներ:
<b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b>
<b>Սոուզարք.</b> Սոուզարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:
<b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b>
<b>Թեմա 1.</b> Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: <b>Թեմա 2.</b> Մշակույթի մակարդակները: Ազգային և համամարդկային բնույթը: Զանգվածային և էլիտար մշակույթ: <b>Թեմա 3.</b> Հոգևոր գործունեության մշակութային ձևերը: Կրոն, գիտություն և արվեստ: <b>Թեմա 4.</b> Մշակույթ-բնություն-հասարակություն: <b>Թեմա 5.</b> Նախնադարյան մշակույթ: Հին Արևելյան քաղաքակրթություններ (միջազգետքյան, եզրակացնական, հին հնդկական և չինական): <b>Թեմա 6.</b> Անտիկ (հունահռոմեական) մշակույթ: <b>Թեմա 7.</b> Միջնադար՝ քրիստոնեական և իսլամական մշակույթներ: <b>Թեմա 8.</b> Վերածնունդ և Ռեֆորմացիա: <b>Թեմա 9.</b> Նոր դարաշրջանի եվրոպական մշակույթը: <b>Թեմա 10.</b> Սովետնիզմի և պոստմոդեռնիզմի դարաշրջանների մշակույթը: <b>Թեմա 11.Հայկական մշակույթ:</b>
<b>14.Հիմնական գրականության ցանկ.</b>
1. Մելքոնյան Գ., Մշակութարանություն, Եր., 2000: 2. Սարգսյան Ս.Ս., Մշակութարանություն, Եր., 1997 3. Սարգսյան Ս.Ս., Մշակույթի տեսություն և հայ մշակույթի պատմություն, Եր., 2004: 4. Արյունով Ս.Ա., Պատմություններ, Երևան, 2004. 5. Ռոզին Վ.Մ., Կուլտурология, Մ., 1998.

<b>1.0304/B17</b>	<b>2.Կրոնազիտության հիմունքներ</b>	<b>3. 2 ECTS կրեդիտ</b>
<b>4.2 Ժամ/շաբ.</b>	<b>5.30/0/0</b>	
<b>6.3-րդ կիսամյակ</b>	<b>7.Սոուզարք</b>	
<b>8.Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանարանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ:</b>		
<b>Դասընթացի խնդիրները.</b>		
1. Ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների վերաբերյալ: 2. Ուսումնասիրել կրոնական տարատեսակ ուղղությունների դավանարանական ու պաշտամունքային առանձնահատկությունները:		
<b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիկ՝</b>		
<b>ա. մասնազիտական գիտելիք և իմացություն</b>		
1. Ներկայացնելու ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնածիսական առանձնահատկություններ ունեն դրանք, 2. Նկարագրելու հայ առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները:		
<b>բ. գործնական մասնազիտական կարողություններ</b>		
1. Մեկնաբանելու ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները, 2. համեմատական վերլուծության ենթարկելու և իրարից տարբերելու հին աշխարհի տարբեր ժողովուրդների դիցարանական համակարգերը:		
<b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b>		
1. պահպանելու մասնազիտական էթիկայի նորմերը:		
<b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>		
<b>Գ2.Ուսումնական կամ աշխատանքային միջավայրում աշխատելու որպես թիմի անդամ, ստանձնելու պատասխանատվություն համընդիմանուր նպատակին հասնելու համար, կառավարելու մասնազիտական գործառույթներ ու ծրագրեր, կազմակերպելու մտագրոհներ և քննարկումներ, բանավիճելու, արդարացնելու, հետևություններ անելու, առաջարկելու լուծումներ, ինչպես նաև հիմնավորելու և պաշտպանելու սեփական տեսակետը:</b>		
<b>Գ4.Դահպանելու մասնազիտական էթիկայի չափանիշները, մասնազիտական գործունեության ընթացքում սեփական վարքագծով նպաստելու համամարդկային արժեքների ձևավորմանը և տարածմանը:</b>		

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճ
4. զեկուցում
5. ուժերատ
6. անհատական և խմբային առաջադրանքներ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Ստուգաքննությունը կազմակերպվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա 1.** Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: **Թեմա 2.** Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: **Թեմա 3.** Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: **Թեմա 4.** Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ:

**Թեմա 5.** Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: **Թեմա 6.** Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: **Թեմա 7.** Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: **Թեմա 8.** Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: **Թեմա 9.** Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: **Թեմա 10.** Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:

**14.Հիմնական գրականության ցանկ.**

1. Ալիշան Դ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002:
2. Աստվածաշունչ:
3. Գուրան, Մոֆիա, 1929:
4. Երուանդ Վրդ. Տէր-Մինասեանց, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա., Էջմիածին, 1908.
5. Վladimirion H., Ovsienko F., Мировые религии, M., 1998.
6. История религии, т. 1-2, M., 2002.

1.0303/B17	2.Բարոյագիտության հիմնութներ	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5. 30/0/0	
6.3-րդ կիսամյակ	7. ստուգաք	

**8.Դասընթացի նպատակն է ներկայացնել բարոյականության տեսության հիմնահարցերը, ամբողջացնել բարոյականության մասին սովորողի պատկերացումները, բարձրացնել բարոյական գիտակցությունը և համաշխարհայնացման արդի ժամանակաշրջանում նպաստել ուսանողի բարոյափիլիսոփայական աշխարհայացքի ձևավորմանը:**

**Դասընթացի խնդիրները.**

1. Ծանոթացնել բարոյագիտության հիմնական հասկացություններին, բարոյական առաջընթացի էությանն ու չափանիշներին, բարոյականության էությանը, կառուցվածքային բաղադրիչներին, յուրահատկությանը, գործառույթներին, բարոյականության և ազատության հարաբերությանը, ազգային ու համամարդկային բարոյամշակութային արժեքներին, բարոյական արժեհամակարգին:
2. Ցույց տալ ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին:
3. Նպաստել անձի բարոյական մտահաղորդակցության ձևավորմանը:
4. Բացահայտել բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից:
5. Վերլուծել բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները:
6. Ընդլայնել սովորողների մտահորիզոնը:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիկ՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. սահմանելու բարոյագիտության հիմնական հասկացությունները, բարոյական առաջընթացի էությունը ու չափանիշները:
2. արժեքելու ազգային և համամարդկային բարոյամշակութային արժեքները, բարոյական արժեհամակարգը:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. ցույց տալու ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին:
2. բացահայտելու բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից:
3. Վերլուծելու բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

- պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ2.Ուսումնական կամ աշխատանքային միջավարում աշխատելու որպես թիմի անդամ, ստանձնելու պատասխանատվություն համընդհանուր նպատակին հասնելու համար, կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, կազմակերպելու մտագրոհներ և ըննարկումներ, բանավիճելու, արդարացնելու, հետևություններ անելու, առաջարկելու լուծումներ, ինչպես նաև հիմնավորելու և պաշտպանելու սեփական տեսակետը:**

**Գ4.Պահպանելու մասնագիտական էթիկայի չափանիշները, մասնագիտական գործունեության ընթացքում սեփական վարքագծով նպաստելու համամարդկային արժեքների ձևավորմանը և տարածմանը:**

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն
- քննարկումներ
- զեկուցումներ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**Սովորաբերություն.** Սովորաբերություն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Բաժին 1. Բարոյագիտության հիմնական կատեգորիաները.** Թեմա 1. Հասկացություն բարոյագիտության կատեգորիաների մասին: Թեմա 2. Բարին և չարը: Թեմա 3. Պարտը և պատասխանատվություն: Թեմա 4. Պատիվ և արժանապատվություն: Թեմա 5. Խիրական իրեալ: Թեմա 6. Վյանքի իմաստն ու նպատակը: Թեմա 7. Երջանկություն. Մեր: **Բաժին 2. Բարոյականության եռթյունը, կառուցվածքային բաղադրիչները, յուրահատկությունը և գործառույթները:** Թեմա 8. Բարոյականության եռթյունը, յուրահատկությունը և կառուցվածքային բաղադրիչները: Թեմա 9. Բարոյականության հիմնական սոցիալական գործառույթները: **Բաժին 3. Բարոյականություն և ազատություն:** Թեմա 10. Անձը և համակեցությունը: Թեմա 11. Բարոյականության հասարակական խնդիրները: **Բաժին 4. Անձի բարոյական գիտակցությունը:** Թեմա 12. Անձի բարոյական գիտակցությունը: Թեմա 13. Անձի բարոյական գործունեությունը: Թեմա 14. Անձի բարոյական հարաբերությունները: Թեմա 15. Անձի բարոյական մշակույթը: **Բաժին 5. Համամարդկային բարոյական արժեքներ և ազգային բարոյական նկարագիր:** Թեմա 16. Ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաբիմաստավորումը եվրոպական բարոյամշակութային արժեհամակարգի համատեսություն: Թեմա 17. Ազգային-բարոյական նկարագիր: **Բաժին 6. Բարոյագիտության կիրառական խնդիրներ:** Թեմա 18. Կիրառական բարոյագիտություն:

**14.Հիմնական գրականության ցանկ.**

- Разин А., Этика, М., 2003.
- Дробницкий О., Понятие морали, М., 2004.
- Дж. Мур, Прунципы этики, Москва, 1984.
- Этика, Учебник под. Ред. А. Гусейнова и Е. Дубко, Москва, 2000.
- Словарь по этике.

1.0303/B17	2.Անցիողգիայի հիմունքներ	3.2 ECTS կրեմիտ
4.2 ժամ/շաբ.	5.30/0/0	
6.3-րդ կիսամյակ	7.Սովորաբերություն	
<b>8.Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին անհատների, սոցիալական խմբերի, դասակարգերի, մարդկային այլ խմբերի գործունեության մեջ հասարակական ընդհանուր օրինաչափությունների դրսնորման ձևերին և գործողության մեխանիզմներին տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:</b>		
<b>դասընթացի խնդիրները</b>		
1. Զնավորել համակարգված պատկերացում կիրառական սոցիոլոգիայի ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ:		
2. Ուսումնասիրել սոցիալական խմբերի ընդհանուր օրինաչափությունները, դրսնորման ձևերը և գործողության մեխանիզմները տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:		
<b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք՝</b>		
<b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b>		
1. Ներկայացնելու գիտության մեջ «սոցիոլոգիա» հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները:		
2. սահմանելու սոցիոլոգիայի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:		

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. մեկնարանելու տեղեկատվություն հավաքելու մեթոդները:
2. վերլուծելու սոցիալական խմբերը, դասակարգերը:
3. մեկնարանելու կիրառական սոցիոլոգիայի հետազոտության մեթոդների տեսակները:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. աշխատելու թիմում:
2. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ2.**Ուսումնական կամ աշխատանքային միջավայրում աշխատելու որպես թիմի անդամ, ստանձնելու պատասխանատվություն համբուղիանուր նպատակին հասնելու համար, կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, կազմակերպելու մտագրոհներ և քննարկումներ, բանավիճելու, արդարացնելու, հետևողուներ անելու, առաջարկելու լուծումներ, ինչպես նաև հիմնավորելու և պաշտպանելու սեփական տեսակետը:

**Գ4.**Պահպանելու մասնագիտական էթիկայի չափանիշները, մասնագիտական գործունեության ընթացքում սեփական վարքագծով նպաստելու համամարդկային արժեքների ձևավորմանը և տարածմանը:

**11. Կիրառում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. ուժեքատներ
5. զեկուցումներ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Ստուգաքննություն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա 1.** Կիրառական սոցիոլոգիա առարկայի նպատակը, խնդիրները: **Թեմա 2.** Տեղեկատվությունների մեթոդները: **Թեմա 3.** Դիտման մեթոդ, հարցման մեթոդ, հարցազրույցի մեթոդ, փաստաթղթերի վերլուծության մեթոդ, Ֆոկուս խումբ: **Թեմա 4.** Հարցաշարի կառուցվածքը, տեսակները: **Թեմա 5.** Սոցիոլոգիական հետազոտության փուլերը, ծրագրեր, ընսրանք:

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Бабосов Е.М., Прикладная социология. Тетра Системс, 2001.
2. Горшков М., Шереги Ф., Прикладная социология. Методология и методы. Москва, 2011.
3. Горшков М., Шереги Ф., Прикладная социология. Методология и методы. Интерактивное уч. пособ. На CD-ROM. 2012 г.
4. Долгоруков А., От замысла к действию. Стратегическое управление. ДИСКУРС, 2011.
5. Ельмееев В., Овсянников В.Г., Прикладная социология: Очерки методологии. 1994 г.
6. Кравченко А., Прикладная социология и менеджмент: Хрестоматия. М., 1998.

1.0304/B17	2.Տրամաբանության հիմունքներ	3. 2 ECTS կրեմիս
4.2 Ժամ/շաբ.	5. 30/0/0	
6.3-րդ կիսամյակ	7.Ասուլազրը	

**8.Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել մտածողության օրենքները և կանոնները, սովորեցնել մտածել կոռեկտ դատել, գերծ մնալ տրամաբանական այն սխալներից:**

**Դասընթացի խնդիրները.**

1. Ցույց տալ հասկացության և բառի տարրերությունները:
2. Ծանոթացնել հասկացության տեսակների, տրամաբանական հնարների հետ:
3. Ծանոթացնել տրամաբանության և նախադասության կապին, անդրադառնալ դատողության տեսակներին, տրամաբանության օրենքներին:
4. Ծանոթացնել մտահանգման տարրեր տեսակներին և նրանց կանոններին, պարզաբանել ապացուցման և հերքման եռթյունը, նրանց եղանակները, բացահայտել ապացուցման և հերքման ընթացքում հնարները, տրամաբանական սխալները:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք՝****ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. սահմանելու հասկացության, նրա տեսակների, հասկացության ծավալների միջև հիմնական հարաբերությունները, տրամաբանական հնարները:
2. մեկնարանելու դատողության, նրա տեսակների, դատողությունների միջև հիմնական

	<p>հարաբերությունների, տրամաբանական հիմնական օրենքները:</p> <p>3. սահմանելու մտահանգումը, նրա տեսակները, անհրաժեշտ մտահանգման տեսակները, նրանց կանոնները, ապացուցումն ու հերքումը, նրանց տեսակները, վարկածը, տրամաբանական սխալները:</p>
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>	<ol style="list-style-type: none"> <li>բաժանելու, դասակարգելու, տեսակավորելու հասկացությունները, դրանց տեսակները:</li> <li>զանազանելու հասկացությունն ու դատողությունը, դատողությունները տեսակավորելու ըստ տարբեր հիմքերի, գործածելու տրամաբանության հիմնական օրենքները:</li> <li>զանազանելու մտահանգման տարբեր տեսակները, անսխալ ապացուցել և հերքել:</li> </ol>
<b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b>	<ol style="list-style-type: none"> <li>կառուցելու և հիմնավորելու սեփական մորերը առանց տրամաբանական սխալների:</li> </ol>
<b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>	
<b>Գ2. Ուսումնական կամ աշխատանքային միջավայրում աշխատելու որպես թիմի անդամ, ստանձնելու պատասխանատվություն համընդիանուր նպատակին հասնելու համար, կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, կազմակերպելու մտագրոհներ և քննարկումներ, բանավիճելու, արդարացնելու, հետևություններ անելու, առաջարկելու լուծումներ, ինչպես նաև հիմնավորելու և պաշտպանելու սեփական տեսակետը:</b>	
<b>Գ4. Պահպանելու մասնագիտական էթիկայի չափանիշները, մասնագիտական գործունեության ընթացքում սեփական վարքագծով նպաստելու համամարդկային արժեքների ձևավորմանը և տարածմանը:</b>	
<b>11. Վիճակում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b>	
	<ol style="list-style-type: none"> <li>դասախոսություն</li> <li>քննարկում</li> <li>քանավեճ:</li> </ol>
<b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b>	
	Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:
<b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b>	
	<b>Թեմա 1.</b> Տրամաբանություն առարկան և նրա դերն ու նշանակությունը: <b>Թեմա 2.</b> Հասկացություն: <b>Թեմա 3.</b> Դատողություն: <b>Թեմա 4.</b> Տրամաբանության օրենքները: <b>Թեմա 5.</b> Մտահանգում: <b>Թեմա 6.</b> Ապացուցում և հերքում: <b>Թեմա 7.</b> Պարալոգիզմ, ստվետություն, սրամտություն, Պարադոքս: Հիպոթեզ:
<b>14. Հիմնական գրականության ցանկ.</b>	
	<ol style="list-style-type: none"> <li>Բրուտյան Գ., Տրամաբանության դասընթաց, Եր., 1976:</li> <li>Կոնդակով Ի., Լогический словарь, Москва, 1975.</li> <li>Гетманов А., Логика, Москва, 1993.</li> <li>Маковелский А., История логики, Москва, 1967.</li> <li>Демидов И., Логика, Москва, 2004:</li> </ol>

<b>1.0105/B17</b>	<b>2. Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր</b>	<b>3. 2 ECTS կրետիխ</b>
<b>4.2 Ժամ/շաբ.</b>	<b>5.30/0/0</b>	
<b>6.3-րդ կիսամյակ</b>	<b>7. Ստուգարք</b>	
<b>8. Դասընթացի նպատակն է՝ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների ներկայացուցիչներին բնագիտական գրագիտության հիմունքներին 21-րդ դարի մակարդակով ծանոթացնելն է: Այն պիտի առաջին հերթին ապագա մտավորականին ուսանի բնագիտության, մաթեմատիկայի և հումանիտար գիտությունների ուսումնասիրման առարկաների ու մեթոդոլոգիայի ընդհանրություններին ու տարրերություններին, որ նման մտավորականն իր հետագա գործունեության ընթացքում հնարավորին չափ քիչ ենթարկվի զանազան մոլորություններին, նախապաշարմունքներին ու սնահավատություններին: Դասընթացի ուսումնասիրման ընթացքում կներկայացվի ժամանակակից բնագիտությունը համապատասխ մեթոդների և օրենքների ամբողջության մեջ՝ ցուցադրելով շրջապատող աշխարհի ձանաշման ռացիոնալ մեթոդի առանձնահատկությունը, բնագիտության տրամաբանությունը և կառուցվածքը:</b>		
<b>Դասընթացի խնդիրներն են</b>		
<ol style="list-style-type: none"> <li>Զնավորել բնագիտական աշխարհայացք:</li> <li>Ծանոթացնել բնագիտության զարգացման պատմությանը:</li> <li>Բացատրել բնույթյան համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափությունները:</li> <li>Ուսանողներին ծանոթացնել բնագիտության զարգացման ներկա միտումներին:</li> </ol>		
<b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կինք՝</b>		
<b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b>		
1. ներկայացնելու բնագիտության զարգացման փուլերը:		

<p>2. ներկայացնելու բնագիտության հիմնական սկզբունքներ:</p> <p>3. բնութագրելու բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաներ:</p> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կիրառելու բնության համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները տարբեր հետազոտություններում:</li> <li>2. կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալ որակական ու քանակական գնահատական բնության երևույթների վերջնական արդյունքների մասին:</li> <li>3. կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. թիմային աշխատանքի ընթացքում հատակ ներկայացնելու սեփական միտքը:</li> <li>2. օգտվելով տարբեր աղյուններից կատարելու վերլուծություններ և դասակարգելու ստացած ինֆորմացիան:</li> <li>3. ստեղծագործելու՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը:</li> </ol> <p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</b></p> <p><b>Գ4. Ուսումնական կամ աշխատանքի ընթացքում աշխատելու որպես թիմի անդամ, ստանձնելու պատասխանատվություն համընդիանուր նպատակին հանելու համար, կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, կազմակերպելու մտագրոհներ և քննարկումներ, բանավիճակը, արդարացնելու, հետևություններ անելու, առաջարկելու լուծումներ, ինչպես նաև հիմնավորելու և պաշտպանելու սեփական տեսակետը:</b></p> <p><b>Գ4. Պահպանելու մասնագիտական էթիկայի չափանիշները, մասնագիտական գործունեության ընթացքում սեփական վարքագծով նպաստելու համամարդկային արժեքների ձևավորմանը և տարածմանը:</b></p> <p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. խոսքային մեթոդները (դասախոսումը, բացատրումը, պատմումը, գեկուցումը),</li> <li>2. գործնական մեթոդները (Վարժությունների և տնային առաջադրանքի կատարումը),</li> <li>3. տրամաբանական մեթոդները (ինդուկտիվ, դերուկտիվ, անալոգիա),</li> <li>4. ձանաշղղական-ստեղծագործական մեթոդները (բացատրական-ցուցադրական, պրոբլեմային-որոնողական),</li> <li>5. համագրծակցային ուսուցման մեթոդները (թիմային և խմբային աշխատանքներ),</li> <li>6. քննադական մտածողության մեթոդները,</li> <li>7. խմբային աշխատանքի մեթոդները,</li> <li>8. ինքնուրույն աշխատանքի մեթոդները,</li> <li>9. վերահսկողության մեթոդները (գրավոր և բանավոր, պլանավորված և ոչ պլանավորված վերահսկողություն):</li> </ol> <p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>Սոսուլարը.</b> Ուսանողին տրվում է ինքնուրույն աշխատանք ռեֆերատի տեսքով՝ դասընթացին վերաբերվող: Տրվում է ռեֆերատը բանավոր և ժամանակակից մեթոդներով ներկայացնելու հնարավորություն, եթե ուսանողը ինքնուրույն աշխատանքը ներկայացնում է դրսուրելով անհրաժեշտ վերջնարդյունք 50 տոկոսից ավելին նա ստանում է ստուգված:</p> <p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ առարկայի նպատակները, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները և զարգացման փուլերը: <b>Թեմա 2.</b> Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Աշխարհի մեխանիկական, էլեկտրամագնիսական և ժամանակակից պատկերները: <b>Թեմա 3.</b> Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: <b>Թեմա 4.</b> Հարաբերականության հատուկ և ընդիանուր սկզբունքները: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունքը: <b>Թեմա 5.</b> Աստղերի, մոլորակների և տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: <b>Թեմա 6.</b> Կենտրոնի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: <b>Թեմա 7.</b> Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները:</p> <p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ասլանյան Լ., Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ, Եր., 2007:</li> <li>2. Կանկե Վ.Ա., Концепции современного естествознания, Логос. Москва, 2002.</li> <li>3. Концепции современного естествознания, Питер 2008 , (Под. редакц. Л. А. Михайлова).</li> </ol>
--

1. 0303/B17	2. Հոգեբանության հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.30/0/0	

<b>6.3-րդ կիսամյակ</b>	<b>7. Ստուգարք</b>
<b>8. Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողին ընդհանուր հոգեբանության և դրա հիմունքներին, տարբեր բաժինների կառուցվածքին ու զարգացմանը, հոգեկանի ակտիվության մակարդակներին, անձնավորությանը, նրա կառուցվածքին և դրսորումներին, անձի պարզագույն, հոգեկան իմացական գործնքացներին, ուսումնասիրել ընկալման, ըմբռնման առանձնահատկությունները, հիշողության, մտածողության, երևակայության առանձնահատկությունները, պարզաբանել անձի հուզակամային կողմը, անձի հոգեբանական անհատական առանձնահատկությունները:</b>	
<b>Դասընթացի խնդիրները.</b>	
<ol style="list-style-type: none"> <li>Բացահայտել հոգեբանության սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր սեխնոլոգիաները;</li> <li>Լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ:</li> <li>Ցույց տալ ընդհանուր հոգեբանության առանցքային տեսությունները:</li> </ol>	
<b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք</b>	
<b>ա. մասնագիտական զիտելիք և իմացություն</b>	
<ol style="list-style-type: none"> <li>Ճանաչելու ընդհանուր հոգեբանության կառուցվածքը, տարբեր բաժինների զարգացումը և գործառույթները, մեթոդները:</li> <li>Տարբերակելու հոգեկանի ակտիվության մակարդակները:</li> <li>Պարզաբանելու հոգեկան պարզագույն իմացական գործնքացները և նրանց առանձնահատկությունները:</li> <li>Բացատրելու հոգեկան իմացական բարձրագույն գործնքացները և նրանց առանձնահատկություններին:</li> </ol>	
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>Մեկնաբանելու անձի հուզակամային ոլորտի նրբությունները:</li> <li>Տարբերակելու անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները:</li> </ol>	
<b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>զարգացնելու սեփական ընդունակությունները, կարողությունները:</li> <li>Վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորել հետազա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ձանապարհով:</li> </ol>	
<b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>	
<b>Գ2. Ուսումնական կամ աշխատանքային միջավայրում աշխատելու որպես թիմի անդամ, ստանձնելու պատասխանատվություն համընդհանուր նպատակին հասնելու համար, կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, կազմակերպելու մտագրոհներ և քննարկումներ, բանավիճելու, պրդարացնելու, հետևություններ անելու, առաջարկելու լուծումներ, ինչպես նաև հիմնավորելու և պաշտպանելու սեփական տեսակետը:</b>	
<b>Գ4. Պահպանելու մասնագիտական էթիկայի չափանիշները, մասնագիտական գործունեության ընթացքում սեփական վարքագծով նպաստելու համամարդկային արժեքների ձևավորմանը և տարածմանը:</b>	
<b>11. Վիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b>	
<ol style="list-style-type: none"> <li>Դասախոսություն</li> <li>Քննարկում</li> <li>Բանավեճ</li> <li>Գործնական պարապմունք</li> <li>Ռեֆերատ/Էսսե</li> <li>Անհատական և խմբային առաջարրանքներ:</li> </ol>	
<b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b>	
Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:	
<b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</b>	
<b>Թեմա 1.</b> Հոգեբանության առարկան, խնդիրները: <b>Թեմա 2.</b> Հոգեբանական հիմնական մեթոդները, բնագավառները: <b>Թեմա 3.</b> Հոգեկանի ռեֆերատորային մեկնաբանությունը: <b>Թեմա 4.</b> Հոգեկանի ակտիվության մակարդակները: <b>Թեմա 5.</b> Հոգեկանի և զիտակցության զարգացումը: <b>Թեմա 6.</b> Անձի հոգեբանական բնութագիրը: <b>Թեմա 7.</b> Ուշադրություն, ֆիզիոլոգիական հիմքերը, տեսակները, զարգացումը: <b>Թեմա 8.</b> Անձի իմացական հոգեկան գործնքացները զգայություններ: <b>Թեմա 9.</b> Զգայությունների դասակարգումը, զգայունակությունը: <b>Թեմա 10.</b> Ընկալում, ըմբռնում, առանձնահատկությունները: <b>Թեմա 11.</b> Հիշողություն և անձ, տեսակները, գործնքացները: <b>Թեմա 12.</b> Մտածողություն, տեսակները, զգործնքացները: <b>Թեմա 13.</b> Երևակայության և պրոբլեմային իրադրություն, տեսակները: <b>Թեմա 14.</b> Անձի հուզակամային կողմը: <b>Թեմա 15.</b> Անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ խառնվածք, բնավորություն, բնդունակություններ:	

**14.Հիմնական գրականության ցանկ.**

- Ավանեսյան Հ., Հովհաննիսյան Հ., Ասրիյան Է., Հոգեբանություն, դեմքեր, փաստեր/ Ուսումնական ձեռնարկ/, Եր., 2010:
- Նալշաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Եր., 1997:
- Психология. Учебное пособие под. Ред. Е.И.Рогова. М., 2005:
- Маклаков А.Г. Общая психология. М., 2007:
- Немов Р.С., "Психология: учеб. для студ. высш. пед. учеб. заведений: в 3 кн." М.: Гуманит. изд. центр ВЛАДОС (2003).
- Столяренко Людмила Дмитриевна, Психологии.учебник для вузов.-СПб.: Питер, 2010.

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆԱ ԿԱՌՈՒՑԱՄԱՍԱ****(ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ)**

<b>1. 0105/B18</b>	<b>2. Մաթեմատիկական անալիզ-1</b>	<b>3. 6 ECTS կուղիս</b>
<b>4. 6 ԺԱՄ/ՉԱՐ.</b>	<b>5. 45/45/0</b>	
<b>6. 1-ին կիսամյակ</b>	<b>7. Եզրափակիչ գնահատմամբ</b>	
<b>8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել անալիզի 1-ի հիմնական գաղափարներին՝ սահմանների տեսությանն ու մեկ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ հաշվին:</b>		
<b>Դասընթացի խնդիրները.</b>		
1. ուսանողներին ծանոթացնել սահմանների տեսությանը. հաջորդականության սահմաններին և մեկ փոփոխականի ֆունկցիայի սահմաննին,		
2. ծանոթացնել նշանավոր սահմաններին, անընդհատ ֆունկցիաներին ու դրանց հատկություններին,		
3. հիմանվորել մեկ փոփոխականի ֆունկցիայի ածանցյալի գաղափարը, ծանոթացնել դրա երկրաչափական և ֆիզիկական իմաստներին,		
4. մանրակրկիտ ծանոթացնել մեկ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցյալ հաշվին, այդպիսի ֆունկցիաների հատկություններին, ֆունկցիաների հետազոտմանն ու գրաֆիկների կառուցմանը:		
<b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունեալ կիենք՝</b>		
<b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b>		
1. բացատրելու հաջորդականության և ֆունկցիայի սահմանի էռուպունը, թվարկելու նշանավոր սահմանները:		
2. սահմանելու և բացատրելու ֆունկցիայի ածանցյալն ու դիֆերենցյալը, ներկայացնել դիֆերենցելի ֆունկցիաների հիմնական հատկությունները:		
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>		
1. հաշվելու հաջորդականությունների և ֆունկցիաների սահմանները՝ օգտվելով նշանավոր սահմաններից:		
2. հաշվելու ֆունկցիաների ածանցյալները, գտնելու դրանց մոնուտության միջակայքերն ու եքստրեմումները, կառուցելով դրանց գրաֆիկները:		
<b>գ. քննիանության/փոխանցելի կարողություններ</b>		
1. կատարելու թիմային աշխատանք:		
2. հստակ ներկայացնելու միտքը:		
3. օգտվելու տարբեր աղբյուրներից, վերլուծելու և դասակարգելու ստացած տեղեկատվությունը:		
4. պահպանելու մասնագիտական եթերական նորմերը:		
<b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>		
<b>Բ1.Լուծելու մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ընթացքում չնախատեսված իրավիճակներում առաջացած խնդիրները օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար առարկաների գաղափարները, սկզբունքները, դրույժները, խնդիրների լուծման եղանակները:</b>		
<b>Բ2.Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և գումանիտար ների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ, կառուցելու ծրագրային համակարգեր կիրառելով տվյալ բնագավառի ժամանակակից նորարարական ու առաջադեմ մոտեցումները և տեխնոլոգիաները:</b>		
<b>Գ2.Ուսումնական կամ աշխատանքային միջավայրում աշխատելու որպես թիմի անդամ, ստանձնելու պատասխանատվություն համընդհանուր նպատակին համելու համար, կառավարելու մասնագիտական</b>		

գործառույթներ ու ծրագրեր, կազմակերպելու մտագրոհներ և քննարկումներ, բանավիճելու, արդարացնելու, հետևողություններ անելու, առաջարկելու լուծումներ, ինչպես նաև հիմնավորելու և պաշտպանելու սեփական տեսակետը:

**Գ5.** Օգտվելու մասնագիտական գրականությունից օտար և մայրենի լեզուներով, կատարելու գրականության համակողմանի վերլուծություն, պատրաստելու և ներկայացնելու գեկուցյուներ մայրենի և օտար լեզուներով:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. գործնական
3. քննարկում
4. զեկուցում
5. ռեֆերատ:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**Հերացիկ 2 քննություններ**

Նախատեսված է 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Քննական տոմսը պարունակում է 5 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր:

Միավորների քայլը 0,25 է:

**Եղափակիչ քննություն.** բանավոր, 10 միավոր առավելագույն արժեքով: Քննական տոմսը պարունակում է 2 տեսական հարց (3-ական միավոր առավելագույն արժեքով) և 2 խնդիր (2-ական միավոր առավելագույն արժեքով):

Միավորների քայլը 0,5 է:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեսակ 1.** Իրական թվեր, թվային բազմությունների ճշգրիտ եզրերը: **Թեսակ 2.** Թվային հաջորդականություններ, սահմաններ: **Թեսակ 3.** Ֆունկցիայի սահման, թվաբանական գործողություններ սահման ունեցող ֆունկցիաների հետ: **Թեսակ 4.** Անընդհատություն, անընդհատ ֆունկցիաների հատկությունները: **Թեսակ 5.** Ֆունկցիայի ածանցյալ, դիֆերենցիալ ֆունկցիաների հատկությունները: **6.** Ֆունկցիաների հետազոտում և գրաֆիկների կառուցում: **Թեյլորի բանաձևը, կիրառությունները:**

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Գևորգյան Գ. և ուրիշներ., Մաթեմատիկական անալիզի խնդրագիրը, Եր., 2010:
2. Մուստյան Վ., Մաթեմատիկական անալիզ, Եր., 2009:
3. Փիխտեղոլց. Г., Կурс дифференциального и интегрального исчисления, Москва, Наука, 1969.

<b>1. 0105/B19</b>	<b>2. Անալիտիկ երկրաչափություն և հանրահաշվի տարրեր</b>	<b>3. 4 ECTS կուելիտ</b>
<b>4. 4 Ժամ/շաբ.</b>	<b>5. 30/30/0</b>	
<b>6. 1-ին կիսամյակ</b>	<b>7. Առանց եզրափակիչ գնահատման</b>	
<b>8. Դասընթացի նպատակն</b> է ուսանողներին ծանոթացնել անալիտիկ երկրաչափության հիմնական գաղափարների, ինչպես նաև հանրահաշվական հիմնական տարրական կառուցվածքների՝ կոմպլեքս և ամբողջ թվերի բազմությունների, տեղադրությունների, բազմանդամների, թվային մատրիցների, որոշիչների հիմնական հատկությունների ուսումնասիրությունը:		
<b>Դասընթացի խնդիրները.</b>		
1. ՈՒսանողներին ծանոթացնել վեկտորների և կոորդինատական համակարգերի հետ, նրանց հետ կատարվող գործողություններին.		
2. Ծանոթացնել հանրահաշվական կորերի և մակերևույթների, երկրորդ կարգի մակերևույթների, նրանց հատկությունների և տրման ձևերի հետ.		
3. Բացատրել թվային մատրիցների և որոշիչների հատկությունները.		
4. Հակադարձ մատրիցի, մատրիցի ռանգի, բարձր կարգի որոշիչների հաշվման		
<b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիկ՝</b>		
<b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b>		
1. սահմանել կոորդինատական համակարգ, վեկտոր, տեղադրություն, ինվերսիա, թվային մատրից, որոշիչ և մատրիցի ռանգ		
2. գրել ուղղի և հարթության հավասարումները, ուղղորդ, նորմալ վեկտորները, էլիպսի, հիպերբոլի, պարաբոլի կանոնական հավասարումները		
<b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>		
1. կատարել գործողություններ վեկտորների հետ, գտնել կետի հեռավորությունն ուղղից և հարթությունից, ուղղիների, հարթությունների, ուղղի և հարթության փոխադասավորությունը,		
2. կատարել գործողություններ տեղադրությունների և թվային մատրիցների հետ, հաշվել որոշիչ հակադարձ մատրից և մատրիցի ռանգ:		

#### **գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

- ունակ կլինի թիմային աշխատանքի, կվարողանա հստակ ներկայացնել միտքը, օգտվել տարբեր աղյուրներից, վերլուծել և դասակարգել ստացած ինֆորմացիան, պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը

#### **10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Բ1.** Լուծելու մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ընթացքում չնախատեսված իրավիճակներում առաջացած խնդիրները օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար առարկաների գաղափարները, սկզբունքները, դրույժները, խնդիրների լուծման եղանակները:

**Բ2.** Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և գումանիտար ների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ, կառուցելու ծրագրային համակարգեր կիրառելով տվյալ բնագավառի ժամանակակից նորարարական ու առաջատամ մոտեցումները և տեխնոլոգիաները:

**Գ1.** Ուսումնական կամ աշխատանքային միջավայրում աշխատելու որպես թիմի անդամ, ստանձնելու պատասխանատվություն համընդիանուր նպատակին հասնելու համար, կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, կազմակերպելու մտագրուներ և բննարկումներ, բանավիճելու, արդարացնելու, հետևություններ անելու, առաջարկելու լուծումներ, ինչպես նաև հիմնավորելու և պաշտպանելու սեփական տեսակետը:

**Գ5.** Օգտվելու մասնագիտական գրականությունից օտար և մայրենի լեզուներով, կատարելու գրականության համակողմանի վերլուծություն, պատրաստելու և ներկայացնելու զեկույցներ մայրենի և օտար լեզուներով:

#### **11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն
- գործնական
- քննարկում
- զեկուցում
- ուժեքարտ

#### **12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

##### **Հնացածիկ սոսուցումներ**

Նախատեսված 2 ընթացիկ տուգումները խառը-թեստային են, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 5 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Յուրաքանչյուր ընթացիկ սոսուցում ունի ինքնուրույն աշխատանքի բարարիչ, որը բարկացած է 5 ինքնուրույն առաջադրանքներից՝ առավելագույնը 1 միավոր արժեքով: Միավորների քայլը 0.5 է:

#### **13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեսա 1.** Կոորդինատական համակարգեր: Վեկտորի գաղափարը: Գործողություններ վեկտորների հետ:

**Թեսա 2.** Հանրահաշվական կորեր, մակերևույթներ, երկրորդ կարգի կորեր և մակերևույթներ: **Թեսա 3.** Բազմանդամներ: Թվային մատրիցներ: Գործողություններ մատրիցների հետ: **Թեսա 4.** Որոշիչ: Մատրիցի ռունգ: Հակադարձ մատրից:

#### **14. Հիմնական գրականության ցանկ.**

- Моденов П., Аналитическая геометрия, Издательство Московского университета, М., 1969.
- Моденов П., Пархоменко А.С., Сборник задач по аналитической геометрии, Наука, М., 1976.
- Проскуряков И., Сборник задач по линейной алгебре, Наука, М., 1974.
- Золдунյан У.Վ., Անալիտիկ երկրաչափություն (դասախոսությունների ձեռնարկ)

<b>1. 0104/B20</b>	<b>2. Դիսկրետ մաթեմատիկա - 1</b>	<b>3. 4 ECTS կրետի</b>
<b>4. 4 ժամ/շաբ.</b>	<b>5. 30/30/0</b>	
<b>6. 1-ին կիսամյակ</b>	<b>7. Առանց եզրափակիչ գնահատման</b>	
<b>8. Դասընթացի նպատակները.</b>		
ձևավորել պատկերացում դիսկրետ մաթեմատիկայի շրջանակներում ուսումնասիրվող բազմությունների տեսության, բնար հարաբերությունների, կոմբինատորիկայի հիմնական գաղափարների և հատկությունների, այդ տեսությունների կապերի վերաբերյալ, զարգացնել ուսանողների տրամարանական և վերլուծական մտածողությունը դիսկրետ մաթեմատիկայի այս դասընթացի շրջանակներում ուսումնասիրվող մեթոդների և գործիքակազմի միջոցով, ապահովել դասընթացի շրջանակներում ուսումնասիրվող տեսական նյութի յուրացման զուգակցումը դրա կիրառական ասպեկտների ըմբռնման, ինդիրների լուծման գործնական հմտությունների ձևավորման հետ:		
<b>Դասընթացի խնդիրներ.</b>		
1. Ծանոթացնել բազմությունների տեսության հիմնական գաղափարներին,		

- Ներկայացնել բինար հարաբերությունները, տրման եղանակները, դրանց հետ կապված հիմնական գաղափարները (պրյեկցիա, կտրվածք), բինար հարաբերությունների միջև գործողություններն ու դրանց հատկությունները,
- Ծանոթացնել կոմբինատորիկայի հիմնական սկզբունքներին, կարգավորված, չկարգավորված, կրկնվող և չկրկնվող տարրերով ընտրություններին, Նյուտոնի բինումին և դրա կիրառություններին,
- Ծանոթացնել 1-ին, 2-րդ կարգի անդրադարձ առնչություններին, դրանց լուծման եղանակներին, կիրառությանը կոմբինատոր խնդիրների լուծումներում,
- Զնակերպել և ապացուցել կցման և արտաքսման սկզբունքը, ծանոթացնել դրա կիրառություններին:

## **9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինիք՝**

### **ա. մասնագիտական գիտելիք և խմացություն**

- սահմանելու բազմությունների տեսության, բինար հարաբերությունների հիմնական գաղափարները և հատկությունները, թվարկելու դրանց տիպերը և ներկայացնելու դրանց միջև գործողությունները:
- ներկայացնելու կոմբինատորիկայի հիմնական սկզբունքները, սահմանելու նյուտոնի բինում, անդրադարձ առնչություն և ներկայացնելու դրանց լուծման մեթոդները:
- բացատրելու կցման և արտաքսման սկզբունքը, ներկայացնելու դրա կիրառության օրինակներ:

### **բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- արտածելու բազմությունների և բինար հարաբերությունների հատկությունները:
  - մեկնաբանելու և կիրառելու կոմբինատոր խնդիրների լուծման մեթոդները:
  - կիրառելու անդրադարձ առնչությունները, նյուտոնի երկանդամը, կցման և արտաքսման սկզբունքը կոմբինատոր խնդիրների լուծման ժամանակ:
- գ. քննիքանական /փոխանցելի կարողություններ**
- լուծելու հարակից բնագավառներում ձևակերպված գործնական խնդիրները՝ կիրառելով դիսկրետ օբյեկտների կառուցման, հետազոտման և ապացուցելու տեխնիկան:
  - կիրառական խնդիրներ լուծելիս կիրառելու ուսումնասիրած տրամաբանական մեթոդներն ու ալգորիթմները:

## **10. Դասընթացը ձևակորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Բ1.**Լուծելու մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ընթացքում չնախատեսված իրավիճակներում առաջացած խնդիրները՝ օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար առարկաների գաղափարները, սկզբունքները, դրույթները, խնդիրների լուծման եղանակները:

**Բ2.**Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և գումանիտար ների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ, կառուցելու ծրագրային համակարգեր կիրառելով տվյալ բնագավառի ժամանակակից նորարարական ու առաջադիմ մոտեցումները և տեխնոլոգիաները:

**Բ5.**Հավաքագրելու մասնագիտական տվյալներ տեղեկատվական և համակարգչային ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ պահանջող տարբեր պարզ և բարդ խնդիրների լուծման համար, նորարարական մեթոդներով իրականացնելու հավաքագրված մասնագիտական տվյալների քանակական և որակական վերլուծություններ կատարելու տրամաբանական եզրահանգումներ:

**Գ2.**Ուսումնական կամ աշխատանքային միջավայրում աշխատելու որպես թիմի անդամ, ստանձնելու պատասխանատվություն համընդհանուր նպատակին հասնելու համար, կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, կազմակերպելու մտագրուներ և քննարկումներ, բանավիճելու, արդարացնելու, հետևողություններ անելու, առաջարկելու լուծումներ, ինչպես նաև հիմնավորելու և պաշտպանելու սեփական տեսակետը:

**Գ3.**Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:

**Գ5.**Օգտվելու մասնագիտական գրականությունից օտար և մայրենի լեզուներով, կատարելու գրականության համալրումնի վերլուծություն, պատրաստելու և ներկայացնելու գեկուցներ մայրենի և օտար լեզուներով:

## **11. Վիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները**

- դասախոսական աշխատանքներ
- գործնական աշխատանք
- բանավոր քննարկում
- խմբային աշխատանք
- գեկուցում

## **12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

### **1. 1-ին ընթացիկ քննություն.**

Հնդացիկ քննությունը գրավոր է, 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 5 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2-ական միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,25 է:

## **2. 2-րդ ընթացիկ քննություն.**

Հնդացիկ քննությունը գրավոր է, 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 5 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2-ական միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,25 է:

### **13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Բաժին 1. Բազմությունների տեսության հիմունքներ:** Գործողությունների բազմությունների հետ (միավորում, հասում, տարրելություն, սիմետրիկ տարրելություն, լրացում, դեկարտյան արտադրյալ), դրանց հիմնական հատկությունները:

**Բաժին 2. Բինար հարաբերություններ:** Բինար հարաբերության պրոյեկցիա, կտրվածք: Դրանց հատկությունները: Ֆունկցիոնալ հարաբերություններ, համարժեքության, կարգի հարաբերություններ:

**Բաժին 3. Կոմբինատորիկայի հիմնական սկզբունքները:** Ըստրույթուններ կարգավորված, չկարգավորված, կրկնվող և չկրկնվող տարրերով: Նյուտոնի բինոմի կիրառության օրինակներ: Անդրադարձ առնչություններ, դրանց լուծումը և կիրառումը կոմբինատոր խնդիրներում: Կցման և արտաքսման սկզբունքը, կիրառություններ:

### **14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Տննոյան Ռ., Դիսկրետ մաթեմատիկայի դասընթաց, Եր., 1999:
2. Անդերսոն Ջ., Դիսկրետ մաթեմատիկա և կոմբինատորիկա, Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ, Կիև, 2004
3. Գարիլով Գ., Սապոյենկո Ա., “Զարգացման և սպառապես առաջարկություններ”, Մոսկվա, 2006.
4. Եյօվ Ի., Սկորոհօդ Ա., Յադրենկո Մ., Էլեմենտներ կոմբինատորիկա, Մոսկվա, Խորհրդային տպարտություն, 1977.
5. Նովիկով Փ., “Դիսկրետ մաթեմատիկա և պրոցեդուրական առաջարկություններ”, Սանկտ-Պետերբուրգ, 2007.
6. Խագգարտի Ր., “Դիսկրետ մաթեմատիկա և պրոցեդուրական առաջարկություններ”, Մասնակիություն, 2003.
7. յանոնսկի Ս.Վ., “Վեճություն մաթեմատիկայի մասին”, Վայություն, 2003.
8. Հ. Ա. Վիլենկին, [Կոմբինատորիկա, Մոսկվա, Խորհրդային տպարտություն, 1969.](#)
9. Rosen Kenneth H. “Discrete mathematics and Its Applications”, 7-th edition, McGraw- Hill, 2006.

1. 0104/B21	2. ԷջՄ և ծրագրավորում - 1	3.4 ECTS կրեդիտ
4.4 ժամ/շաբ.	5. 30/30/0	
6.1-ին կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատմամբ	
<b>8. Դասընթացի նպաստակներ:</b> Է ուսանողներին ծրագրավորում սովորեցնել C++ բարձր կարգի օբյեկտային կողմանությամբ աշխատելու հիմնարար կարգավորման լեզվի հիմնարար կարգավորման գործությունները: Տեղեկատվական տեխնոլոգիաների շրջանակներում ուսանողներին տալ տեսական և գործնական այնպիսի պատրաստում, որ նրանք կարողանան ձիշտ և արդյունավետ ընտրել անհրաժեշտ տեխնիկական, ալգորիթմական, ծրագրային և տեխնոլոգիական լուծումներ, կարողանան բացատրել նրանց գործունեության սկզբունքները և ձիշտ կիրառել գործնական աշխատանքում:		
<b>Դասընթացի խնդիրներն են:</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. ձևավորել հաշվարկման տարրեր համակարգերի թվերի և ԷջՄ-ում նրանց ներկայացման ֆորմատների հետ աշխատելու կարողություններ,</li> <li>2. ձևավորել ուսանողների մոտ ալգորիթմական մտածողություն և խնդիրների լուծման համար տարրեր ալգորիթմներ մշակելու ունակություններ,</li> <li>3. ձևավորել կիրառական խնդիրների լուծման համար C++ լեզվով ծրագրերի մշակման, կարգավերման, իրականացման և վերլուծության գործնական հմտություններ:</li> </ol>		

### **9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինիկ՝**

#### **ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. դասակարգելու հաշվարկման համակարգերը, բացատրելու նրանց տարրերությունները, մատնանշելու էիմ հիշողությունում թվերի ներկայացման տարրեր ֆորմատները և մեկնաբանելու նրանց տարրերությունները, բացատրելու տարրեր ֆորմատներում թվաբանական գործողությունների կատարման սկզբունքները:
2. սահմանելու ալգորիթմ, ներկայացնելու ալգորիթմների հետ աշխատելու մեթոդները, դասակարգելու ալգորիթմական լեզվուները և ներկայացնելու համապատասխան թարգամանիչների աշխատանքի սկզբունքները:
3. թվարկելու օբյեկտային կողմանությամբ ծրագրավորման լեզվի առանձնահատկությունները, տալու C++ լեզվի քերականական կառուցվածքը, բացատրելու այդ լեզվով գրվող ծրագրերի կառուցման հիմնական սկզբունքները:
4. թվարկելու C++ լեզվի հիմնական տարրերը, նկարագրելու տարրեր տիպի և կառուցվածքի տվյալներ,

թվարկելու լեզվի հիմնական դեկավարող կառուցվածքները և բացատրելու նրանց աշխատանքի սկզբունքները:

#### **բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- Ներկայացնելու թվերը հաշվարկման տարբեր համակարգերում, կատարելու թվի վերլուծություն և նրանց միջև տարբեր թվարանական գործողություններ, իմ-ի հիշողությունում ներկայացնելու ամրող և իրական թվերը համապատասխան ֆորմատներում:
- գրելու տարբեր բարդության ծրագրեր C++ լեզվի հիմնական դեկավարող կառուցվածքների՝ օպերատորների, ստատիկ և դինամիկ կառուցվածքների, ֆունկցիաների և ստանդարտ ֆայլերի կիրառմամբ:
- կազմելու թվարանական, տրամաբանական արտահայտություններ տարբեր տիպի տվյալների համար և հաշվելու նրանց արժեքը:
- ուսումնասիրելու տրված խնդիրը և գրելու այն իրականացնող ծրագիր, կատարելու նրա արդյունավետության գնահատում:

#### **գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

- աշխատելու C++ լեզվի ծրագրային փաթեթի հետ, կարգաբերելու C++ լեզվով գրված ծրագրերը և իրականացնել:
- ստանալու տեղեկատվություն, պահպանելու և մշակելու, ինքնուրույն ուսումնասիրելու նոր ծրագրավորման լեզուներ, յուրացնելու և գրելու ծրագրեր նրանց միջոցով:
- դնելու խնդիրներ և մշակելու տրված խնդիրների լուծման համար տարբեր ալգորիթմներ, մեկնաբանելու ուրիշի գրած ծրագրերը, վերլուծելու և վերամշակելու ալգորիթմն ըստ ներկայացվող պահանջների:
- հաղորդակցվելու ծրագրավորման և ալգորիթմական/տեղեկատվական մասնագիտորեն ձիշտ և գրագետ տերմիններով:

#### **10. Դասընթացը ձևակորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.** Ներկայացնելու և բացատրելու ծրագրավորման ժամանակակից սկզբունքները, մեթոդները (կառուցվածքային մեթոդ, օբյեկտային կողմնորոշված մեթոդ, ֆունկցիոնալ ծրագրավորման մեթոդ, համակարգային մեթոդ, տարրային ծրագրավորման մեթոդ), և արդի տեխնոլոգիաները:

